ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբեր 2022թ. ՆՄՈ/359-2022

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման, հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վերահսկողություն և բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկում իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն N1 հավելվածի:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Մելիքյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մշակված ձևաչափին համապատասխան՝ համաձայն N2 հավելվածի:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Մելիքյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին (համաձայնությամբ):
4. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Մելիքյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ավետիսյանին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 07.06.2022 17:29:10 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի հունիսի -ի
ՆՄՈ/359 -2022 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ՝ Գոռ Մելիքյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Ռաֆիկ Երվանդյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի Իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան՝ Լիաննա Հարությունյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի Հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ՝ Սողոմոն Սարգսյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 07.06.2022 16:37:07 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023